

MARIAM BADOYAN*Менеджмент, бакалавриат, 2-й курс*

ПОКАЗАТЕЛИ ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В УСЛОВИЯХ ЭПИДЕМИИ

Ключевые слова: *экономический спад, экономический рост,
эпидемия коронавируса, темпы роста*

2020 год был полон сюрпризов как для Армении, так и для всего мира. Распространение эпидемии глубоко затронуло практически все сферы жизни. В экономике было много потрясений, которые не остались незамеченными. Начался глубокий экономический кризис, от чего не осталась в стороне и экономика РА. Это сопровождалось глубоким экономическим спадом. В таких условиях Правительство РА приняло соответствующие меры и реализовало антикризисные меры по восстановлению экономики. Однако мы не можем оценить все последствия эпидемии, так как она еще продолжается, но первичные последствия уже очевидны.

MARIAM BADOYAN*Management, Bachelor's Degree, 2nd Year*

INDICATORS OF ECONOMIC ACTIVITY OF THE REPUBLIC OF ARMENIA IN TIMES OF PANDEMIC

Keywords: *economic decline, economic growth, coronavirus
epidemic, growth rate*

2020 was full of surprises both for Armenia and the whole world. The spread of the epidemic has deeply affected almost all spheres of life. Economic shocks did not go unnoticed. A great economic crisis started, from which the RA economy was not left out. It was accompanied by the deep economic downturn. In such conditions, the RA government took appropriate measures and implemented anti-crisis measures to restore the economy. However, we can not estimate the full impact of the epidemic. It is still actual and the primary consequences are obvious.

ՍԱԹԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ*Տնտեսագիտություն,
բակալավրիատ, 3-րդ կուրս*

OPEN BANKING' ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

Հիմնաբառեր. *open banking, մորայլ բանկինգ, բանկային
ծառայություններ, ֆինտեխ
կազմակերպություններ, տեղեկատվական
անվտանգություն*

Ներկայումս բանկային համակարգի առաջարկած ծառայությունները բավականին ավանդական են, հաճախ չեն համապատասխանում մեր տեխնոլոգիական դարի պահանջներին և չեն բավարարում հաճախորդների պահանջմունքները: Քանի որ շուկայում առողջ մրցակցությունը խթանում է նորարարությունը, բարձրացնում շուկայի արդյունավետությունը, մի շարք պետությունների կառավարություններ փորձել են մեծացնել ֆինանսական շուկայի ներուժը և այն համապատասխանեցնել 21-րդ դարի պահանջներին՝ դրդելով ֆինտեխ կազմակերպություններին մղնել բանկային դաշտ: Ֆինտեխ կազմակերպությունները հաճախորդներին առաջարկում են նոր, առավել ճկուն հնարավորություններ: Այդպիսի նորարարական օրինակներից է տեխնոլոգիայես բաց

բանկային համակարգը (open banking): Հեղափոխելով բաց բանկային համակարգի կիրառման՝ մի շարք երկրների փորձը և ուսումնասիրելով հավանական ռիսկերն ու առավելությունները՝ հանգել ենք այն եզրակացության, որ այն կխթանի մրցակցությունը ֆինանսական շուկայում, կհեշտացնի տարբեր բանկերի քարտային հաշիվների, ավանդների, վարկերի, վճարումների կառավարումը և կնպաստի բանկ-հաճախորդ հարաբերության վերափոխմանը:

Ներածություն: Բաց բանկային համակարգն այնպիսի բանկային ծառայություն է, որի դեպքում բանկերն իրենց հաճախորդների համաձայնությամբ նրանց տվյալները (բանկում առկա), վերլուծական կամ այլ բնույթի ծառայություններ առաջարկելու նպատակով, փոխանցում են երրորդ կողմին՝ առանց այն հետազայում օգտագործելու կամ պահպանելու թույլտվության: Բանկերը պարտավոր են կառուցել կիրառական ծրագրավորման միջերեսներ (Application Programming Interfaces կամ API-ներ), որոնց միջոցով երրորդ կողմը համեմատաբար ապահով մուտք կունենա դեպի հաճախորդի տվյալներ:

Սույն հոդվածի նպատակն է հասկանալ, թե բաց բանկինգը՝ որպես նորամուծություն, ինչ հնարավորություններ է ընձեռում՝ արդյո՞ք նոր խաղացողների՝ բանկերի, երրորդ կողմի, վերջնական սպառողների համար կբացվի խաղադաշտ, արդյո՞ք կտա այն արդյունքը, ինչին ձգտում են երկրները՝ բաց բանկինգը կիրառելիս, մասնավորապես՝ ֆինանսական շուկայի մրցակցության բարձրացում, տվյալների արդյունավետ օգտագործում:

Գրականության ակնարկ: Ֆինտեխը արագ զարգացող ոլորտ է, որը համատեղում է ֆինանսական ծառայություններն ու տեխնոլոգիաները՝ օգնելու մարդկանց և ձեռնարկություններին՝ կառավարելու իրենց վճարումները և ֆինանսները: Համաձայն Statista-ի՝ 2018-2021 թթ. միայն EMEA-ում (Europe, the Middle East, Africa) ֆինտեխ ընկերությունների թիվը գրեթե եռապատկվել է¹: Ֆինտեխ կազմակերպությունների մուտքով բանկային շուկա ապահովվում է վերոնշյալ ոլորտի ավելի արագ զարգացումը, նորամուծությունների կիրառումը, օրինակ՝ բաց բանկային համակարգը: Անդրեա Տուսինոն բաց բանկինգը տեսնում է որպես ֆինանսական շուկայում ներդրումների խթանող: Ըստ նրա՝ «Այս նոր մոտեցումը նաև կօգնի ստեղծել նոր բիզնես-մոդելներ և կարող է ներկայացնել նոր դերակատարներ շուկայում: Բաց բանկային գործունեությունը բաց ֆինանսների համար իսկական հեղաշրջում է»²: Ըստ Խավիեր Ֆազի և Գրեգ Չենի՝ «Տվյալների փոխանակման և վճարումների ճկունության նոր համակարգերը կարող են խթանել նորարարությունը՝ բացելով սպառողների տվյալների հասանելիությունը, որոնք այժմ պահվում են վճարային ընկերություններում, բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում: Բաց տվյալների և վճարումների դեպքում հաճախորդներ գտնելը կարող է շատ ավելի արդյունավետ լինել և՛ առևտրային բանկերի, և՛ ֆինտեխ կազմակերպությունների համար»³: Անդրադառնալով բանկային համակարգի առավելություններին՝ Գուստավ Կորոբովը խոսում է նաև հնարավոր ռիսկերի մասին. «Կան անձնական տվյալների կորստի կամ գողության, տվյալների անվտանգության խախտումների, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ռիսկեր: Եթե նոր հավելվածները, որոնք մշակում են ֆին-

¹ <https://www.statista.com/statistics/893954/number-fintech-startups-by-region/>

² Open Banking: European Countries Need to “Harmonize” their Approach to Open Finance, Andréa Toucinho.

³ Open Data and the Future of Banking by Greg Chen, Xavier Faz

տեխ ընկերությունները, և համակարգերը, որոնց վրա նրանք կաշխատեն, բավականաչափ ապահով չլինեն, ապա հարձակվողները, ամենայն հավանականությամբ, կնկատեն և կօգտագործեն այդ հավելվածները իրենց «կարիքների համար»¹: Իսկ մի քանի աղբյուրներում խոսվում է այն մասին, որ ինչքան էլ բաց բանկինգում առևտրային բանկերը և ֆինտեխ ընկերությունները մրցակիցներ են, այնուամենայնիվ, իրենց համագործակցությունն առավել արդյունավետ ու շահավետ է երկու կողմի համար²:

Մեթոդաբանություն: Հաշվի առնելով բանկային համակարգի զարգացման միտումները, դրան խոչընդոտող և խթանող գործոնները՝ սույն հոդվածում ներկայացվել են բաց բանկային համակարգի նախապայմանները, առավելությունները և հնարավոր ռիսկերը, միջազգային փորձը: Հոդվածում կիրառվել և զուգակցվել են համանմանության, պատմական և տրամաբանական, արտածության, մակածության մեթոդները: Հոդվածի տեղեկատվական հիմքը ոլորտի առանցքային հետազոտություններն ու աշխատություններն են:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: Տնտեսության թվայնացմանը զուգընթաց կառավարություններն սկսում են գիտակցել, որ բոլոր ոլորտներում, այդ թվում՝ ֆինանսական և բանկային, սկսել են կիրառվել տվյալադիտության, թվային, ամպային տեխնոլոգիաների գործիքները, որոնց զարգացմամբ տվյալներն սկսում են արժեք ձեռք բերել: Միևնույն ժամանակ, դրամական միավորները, որպես այդպիսիք, կորցնում են իրենց նախկին դիրքը, իսկ հաճախորդի մասին բանկի ունեցած տվյալները ոչ թե բանկի, այլ հաճախորդի սեփականությունն են, և վերջինս իրավունք ունի տնօրինելու դրանք՝ ավելի արդյունավետ գործարքներ կատարելու, ապրանքներ ու ծառայություններ ձեռք բերելու նպատակով:

Ֆինանսական ոլորտը պահպանողական արդյունաբերություն է: Համաշխարհային ֆինանսական ծառայությունների ոլորտում վերջին խոշոր փոփոխությունն սկսվում է 1980-ականներին, երբ Գերմանիայի դաշնային փոստային բաժանմունքը ներկայացնում է թվային ֆինանսները: 1980 թվականից մինչև 2018-ը վճարային գործարքներ իրականացնելու իրավունք են ունեցել միայն բանկերը և պետական կառույցները³:

2015 թ. հոկտեմբերի 8-ին Եվրախորհրդարանը Եվրահանձնաժողովի առաջարկության հիման վրա ընդունեց Վճարային ծառայությունների վերափոխված դիրեկտիվը, որը ֆինանսական շուկաներում հայտնի դարձավ որպես PSD2 (Revised Directive on Payment Services): Եվրախորհրդարանը մեկ ամիս անց՝ նոյեմբերի 16-ին, ընդունեց այն ու սահմանեց, որ ուժի մեջ է մտնում 2018 թ. հունվարի 13-ին՝ բանկերին երկու տարի ժամկետ տալով համապատասխանեցնելու իրենց գործունեությունը նոր դիրեկտիվի պահանջներին:

PSD2-ը Եվրոպայում ձևավորեց նոր մոտեցում ու կարգավորում՝ սկիզբ դնելով Open Banking-ին: Ըստ այս նոր կարգավորման՝ բանկերը պարտավոր են իրենց հաճախորդների համաձայնությամբ ու ցուցումով երրորդ անձանց (օրինակ՝ տեխնոլոգիական ընկերություններին (Facebook), առցանց մանրածախ ընկերություններին (Amazon)) անսահմանափակ մուտքի հնարավորություն տրամադրել հաճախորդի՝ բանկում առկա տվյալներին: Բանկերը պար-

¹ <https://www.finextra.com/blogposting/18875/open-banking-as-a-world-of-open-opportunities-and-hidden-risks>


² <https://monei.com/blog/fintech-vs-traditional-banks/>

³ <https://knowledge.fintecsyste.ms.com/en/blog/the-history-of-open-banking>

տավոր են կառուցել կիրառական ծրագրավորման միջերեսներ, որոնց միջոցով երրորդ կողմը կկարողանա համեմատաբար ապահով մուտք ունենալ դեպի հաճախորդի տվյալներ՝ դրանք վերլուծելու և հաճախորդի «հագով կարված» ծառայություններ առաջարկելու համար՝ առանց այդ տվյալները հետագայում կիրառելու: Բաց բանկային համակարգի ու PSD2-ի միջև էական տարբերությունն այն է, որ PSD2-ը կարգադրում է բանկերին՝ բացել իրենց տվյալները, մինչդեռ բաց բանկային համակարգն ավելի է հստակեցնում այդ պահանջը՝ բանկերին կարգադրելով դա անել ստանդարտացված եղանակով: Բաց բանկային համակարգը կարելի է նմանեցնել մոբայլ բանկինգի: Բայց կան տարբերություններ: Առաջին տարբերությունն այն է, որ մոբայլ բանկինգի միջոցով կառավարվում են մեկ բանկի հաշիվները և կատարվում գործարքներ, իսկ բաց բանկային համակարգն արդեն ոչ թե մեկ, այլ մի քանի բանկերի հաշիվների համար է և ավելի հազեցած է վերլուծական մեխանիզմներով: Երկրորդ տարբերությունն այն է, որ այս դեպքում հաշիվների մուտք ունեն ոչ միայն հաճախորդները, այլ նաև երրորդ կողմի օգտատերերը, որոնք կարող են ծանոթանալ հաշիվներին ու առաջարկել ծառայություններ: Այսինքն, API-ների միջոցով երրորդ կողմ հանդիսացող ծառայություններ կամ ապրանքներ վաճառողները կարողանալու են վերլուծել հաճախորդների եկամուտները, դրանց չափերը, եկամուտները ծախսելու սովորությունները (ի՞նչ է գնում, պարտքո՞ւմ, թե՞ առկա գումարով է գնում, առցա՞նց, թե՞ ֆիզիկական գնումն է նախընտրում), խնայողական վարքագիծը և այլն: Ինչպե՞ս է այն աշխատում գործնականում. օրինակ՝ մեկ տարուց ավելի օգտվում եք խոշոր բանկի ծառայություններից, մի քանի քարտի սեփականատեր եք և կանոնավոր ավանդատու: Ձեր բանկը բավականին հուսալի, բայց պահպանողական խաղացող է շուկայում: Դուք ցանկանում եք միացնել խելացի վերլուծությունը ձեր տվյալներին և պատկերացում կազմել ձեր անձնական բյուջեի և ֆինանսական սովորությունների մասին: Դա անելու համար բանկը բաց API-ի միջոցով պետք է ապահովի երրորդ կողմի մասնակցությունը, որը մասնագիտացած է նման խելացի վերլուծության մեջ: Դուք համաձայնում եք տվյալների փոխանակմանը և ստանում եք ձեր բոլոր ծախսերի և եկամուտների, կապիտալի և ակնկալվող եկամուտների մանրամասն ամփոփագիրը: Գծապատկեր 1-ի միջոցով ցույց տանք open banking կատարման գործընթացի պարզագույն մոդելը¹:

Ինչպես երևում է գծապատկերում ներկայացված մոդելից, բաց բանկինգի համակարգը բաղկացած է առևտրային բանկերից և երրորդ կողմի կազմակերպություններից: Բանկերից դեպի երրորդ կողմի կազմակերպություններ տանող սլաքը ցույց է տալիս հաճախորդի անձնական տվյալների հոսքը, հակառակ սլաքը՝ հաճախորդների ֆինանսական վարքագծի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության հոսքը՝ բաց API-ների միջոցով: Մոդելից երևում է նաև, որ էկոսիստեմը փակ համակարգ է, այսինքն՝ երրորդ կողմը կարող է տվյալներն օգտագործել միայն ծառայություններ առաջարկելու նպատակով: Իսկ բաց բանկինգի էկոսիստեմից դեպի հաճախորդներ սլաքը ցույց է տալիս երրորդ կողմի կատարած լրացուցիչ ֆինանսական ծառայությունները հաճախորդի համար:

¹ Մխեման կառուցել է հեղինակը՝ օգտվելով https://www.researchgate.net/publication/349861641_A_Hybrid_MCDM_Model_for_Evaluating_Open_Banking_Business_Partners նյութից:



Գծապատկեր 1. Բաց բանկինգի կադարման գործընթացը

Բաց բանկային համակարգի խաղացողները, առևտրային բանկեր

Առաջին հայացքից կարող է թվալ, որ բանկերը ոչ մի առավելություն կամ նոր հնարավորություններ չունեն բաց բանկային համակարգի ներդրումից, այլ ընդհակառակը՝ միայն նոր ռիսկեր: Նոր խաղացողների՝ խաղի մեջ մտնելով, ինչպիսիք են ֆինտեխ ընկերությունները, հաճախորդը կունենա ապրանքներ ընտրելու ավելի շատ տարբերակներ, ինչը, անկասկած, կազդի բանկային ապրանքների պահանջարկի վրա: Բանկերը պետք է բարելավեն տեխնոլոգիաները և ջանքեր գործադրեն առաջարկվող ծառայությունները մրցունակ պահելու համար: Բայց, Open API ներդնելով, բանկերն իրենք էլ կարող են շահել:

Առանձնացնենք են մի քանի կարևոր և օգտավետ ուղի.

- բացելով API-ներ՝ բանկերը հեշտությամբ կարող են միանալ շուկայում այլ ծառայություններ մատուցողների API-ներին, որը հնարավորություն կտա ընդլայնելու իրենց ծառայությունների առաջարկները՝ կիրառելով սեփական plug-and-play¹ ֆինտեխ լուծումները:
- Բանկերը կարող են կազմակերպել գործընկերային դաշինքներ՝ հրավիրելով հաճախորդներին այլ գործընկեր բանկերի հետ մեկ ինտերֆեյսի միջոցով դիտելու իրենց հաշիվների մասին տեղեկատվությունը: Santander-ը, HSBS-ը, Monzo-ն և մի քանի այլ բանկեր, օրինակ, առաջարկում են դիտել իրենց հաշիվը, ինչպես նաև առցանց խնայողությունները, հիփոթեքը, վարկերը և քարտերը, որոնք պահվում են այս ցանկի ցանկացած այլ բանկի կողմից: Հավելվածը կարող է հաճախորդների ընդհանուր ծախսերը խմբավորել ըստ 30 կատեգորիաների՝ ներառյալ մթերային գնումները և կոմունալ ծառայությունները²:

Այնուամենայնիվ, բանկերը պետք է նաև հաշվի առնեն հնարավոր ռիսկերը:

- Թեև ինքնության ստուգումը և խարդախության կանխարգելումը թե՛ Open Banking նախաձեռնության, թե՛ Open Banking API-ի կարևոր բաղադրիչներն են, սակայն կան անձնական տվյալների կորստի կամ գողության, տվյալների անվտանգության խախտումների, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ռիսկեր: Բանկերը կծգտեն դառնալ լիովին թվային, ինչը միջավայր կստեղծի խարդախության համար:
- Վտանգ կա, որ այն ոչ բանկային կառույցները, որոնք կկիրառեն բանկի API-ի բացումը, կկարողանան չարտոնված վճարումներ կատարել և իրենց

¹ Plug and play՝ միացիր և խաղա. տեխնոլոգիա, որը նախատեսված է համակարգչում և տեխնիկական սարքերում այլ սարքերն արագ հայտնաբերելու և կարգավորելու համար:

² <https://monzo.com/help/monzo-plus/connected-accounts-supported-banks>

հաճախորդների հաշիվներից գումար դուրս գրել: Այս դեպքում, յուրաքանչյուր նման գործողության համար, բանկը կարող է ոչ միայն ֆինանսական, այլ նաև հեղինակության կորուստ կրել:

Ֆինտեխ ընկերությունները և ստարտափները

Հետազոտության մեջ համանմանության մեթոդը կիրառելիս պարզ դարձավ, որ ֆինտեխ ընկերությունները և այլ ստարտափներ բաց բանկինգ համակարգից ամենամեծ շահողներն են: Նրանք բաց բանկինգը դիտարկում են որպես բիզնեսի հետագա զարգացման և իրենց բիզնես մոդելի բարելավման դրական գործոն: Նրանց համար այն բաց դուռ է դեպի նոր հնարավորությունների աշխարհ:

- Նրանք կկարողանան ստեղծել նոր պրոդուկտներ, օրինակ՝ բջջային հավելված, որտեղ բանկի հաճախորդները կպլանավորեն իրենց ֆինանսները, կկառավարեն վարկերը, գումար կներդնեն և ֆինանսական խորհրդատվություն կստանան առցանց զրուցարանի միջոցով:
- Ֆինտեխ ընկերությունները կարող են շուկաներ ստեղծել տարբեր ծառայությունների համար՝ դրանով իսկ հնարավորություն տալով հաճախորդներին կա՛մ ընտրել լավագույնը, կա՛մ մուտք ունենալ դեպի շուկա մեկ հավելվածի միջոցով:

Արտածության մեթոդը կիրառելիս պարզ է դառնում, որ ֆինտեխ ընկերությունները ևս գերծ չեն ռիսկերից:

- Տվյալների կորստի, անձնական տվյալների գողության, պաշտպանության խախտումների, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ռիսկեր. ֆինտեխ ընկերությունները կարող են լինել այդ խախտումների և՛ աղբյուր, և՛ կրող:
- Եթե շուկայում նմանօրինակ առաջարկներով խաղացողների թիվը մեծ լինի, ապա հավանականություն կա, որ ֆինտեխ ստարտափները չեն կարողանա փոխհատուցել ծախսերը և ստանալ նախատեսված շահույթը:

Պետությունների կառավարությունները բաց բանկային համակարգը խրախուսում են՝ շուկան ավելի մրցունակ դարձնելու համար, բայց արդյո՞ք շուկան կմնա մրցակցային, եթե խաղի մեջ մտնեն բիգտեխ (BigTech) ընկերությունները: Մինչ այժմ բիգտեխ ոչ մի կառույց չի կարողացել իր հաճախորդներին առաջարկել ամբողջական ֆինանսական էկոհամակարգ՝ չեկային հաշիվներով, ավանդներով և այլ ֆինանսական ծառայություններով: Իսկ Open Banking հայեցակարգի ներդրումը նոր հնարավորություններ կտա GAFA ընկերություններին (Google, Apple, Facebook և Amazon): Վերլուծությունը կատարելիս բացահայտվեց, որ բիգտեխ ընկերությունները ոչ միայն անվտանգության ռիսկի հետ են բախվում, որը բնորոշ է բոլոր խաղացողներին, այլ նաև քաղաքական ռիսկի, որը հատուկ է միայն դրանց: PSD2-ը եվրոպական դիրեկտիվ է, որը գործում է Եվրոպայի տարածքում, և Մեծ քաղաքի էլ ավելի ակտիվ աշխատանքն այս տարածաշրջանում կարող է ընկալվել որպես սպառնալիք ֆինանսական շուկայի ազատ մրցակցության համար: Ինչի՞ կարող է սա հանգեցնել: Կարծում ենք՝ լրացուցիչ հարկերի կամ եվրոպական տարածաշրջանում դրանց աշխատանքը կարգավորելու նոր մեխանիզմների ներդրմանը: Եթե բիգտեխ ընկերություններն իսկապես մտնեն Open Banking շուկա, ապա, ամենայն հավանականությամբ, կլինեն ամենալուրջ մրցակիցները բոլոր խաղացողների համար՝ և՛ հին, և՛ նոր: Տեխնոլոգիական հնարավորություններով,

համաշխարհային շուկա մուտք գործելու և միլիարդավոր սպառողների վստահության շնորհիվ դրանք կդառնան առաջատար:

Վերջնական սպառողներ

Կարող ենք ասել, որ օգտատերերից ոմանք այսօր կա՛մ չգիտեն Open Banking նախաձեռնության մասին, կա՛մ թերահավատորեն են վերաբերվում, կա՛մ ընդհանրապես դեմ են դրան, քանի որ այստեղ իրենց համար առավելություններ չեն տեսնում: Այդուհանդերձ, բաց բանկային համակարգը կարող է բարելավել ծառայությունների որակը սովորական սպառողի համար:

- Ֆինանսական սովորությունների և հաճախորդների վարքագծի վերլուծության ընթացքում ստացված մեծ տվյալները (Big Data)¹ կարող են օգտագործվել անհատականացված ծառայություններ մատուցելու համար:
- Ավելի հարմար աշխատանք ֆինանսական գործիքների հետ, ավելի հարմար ինտերֆեյսներ՝ ավելի արդյունավետ ֆինանսական կառավարման համար: Սպառողին պետք չի լինի մի քանի հավելված բացել, բավական է մեկը, որում կհավաքվեն հաճախակի օգտագործվող բոլոր ծառայությունները կամ հավելվածները:
- Բոլոր աշխատանքային գործընթացների և ծառայությունների արագացում, կոմունալ և այլ ծառայությունների վճարում մեկ հավելվածից և մեկ թույլտվության միջոցով, անհրաժեշտ ֆունկցիոնալության արագ որոնում, օգտագործողի համար հարմար ինտերֆեյսներ. սա այն ամենն է, ինչը կօգնի արագացնել ֆինանսական գործարքները:

Առաջացող ռիսկերի թվում կարելի է նշել անձնական տվյալների կորըստի կամ գողության հետ կապված ռիսկերը, տվյալների պաշտպանության խախտումները: Սպառողներին վերոնշյալ ռիսկերից հնարավորինս ապահովագրելու համար պետություններն օրենսդրական, շուկայական և այլ ճանապարհներով փորձում են կարգավորել այս դաշտը՝ ստեղծելով, այսպես ասած, «խաղի կանոններ»: Կարգավորման փորձերը ներկայացված են ստորև՝ կիրառության միջազգային փորձում:

Բաց բանկային համակարգի կիրառության միջազգային փորձը

Կան բաց բանկինգի շատ նախաձեռնություններ, որոնք միմյանցից տարբերվում են գործարքների իրականացման ժամկետներով, ապրանքների և ծառայությունների տեսականիով, երրորդ անձանց տեսակով: Այնուամենայնիվ, դրանք բոլորն էլ, ընդհանուր առմամբ, կարելի է դասակարգել 2 խմբի մեջ՝ շուկայահենք և կարգավորվող²: Շուկայահենք մոտեցումը կիրառվում է ԱՄՆ-ում, Հնդկաստանում, Ճապոնիայում, Սինգապուրում: Վերոնշյալ մոտեցման դեպքում պետությունն ակտիվ քայլեր է ձեռնարկում՝ ֆինտեխ կազմակերպություններին խթանելու և բանկերի տվյալների տարածմանը նպաստելու համար, սակայն հստակ ձևավորված բաց բանկային համակարգի դաշտ գոյություն չունի: Կարգավորվող մոտեցման դեպքում պաշտոնապես ընդունվում է բաց բանկային ռեժիմ, որտեղ բանկերը և այլ ֆինանսական հաստատություններ որոշակի կանոնակարգերի հիման վրա պարտավոր են տարածել իրենց տվյալները որոշակի պայմաններով. նրանք կարող են ընտրություն կատարել երրորդ կող-

¹ Big Data՝ տվյալների հավաքածու է, որն ունի հսկայական ծավալ և ժամանակի ընթացքում աճում է: Այն այնքան մեծ ծավալի և բարդության տվյալ է, որ տվյալների կառավարման ավանդական գործիքները չեն կարող դրանք պահել և արդյունավետ մշակել: Big Data Analytics-ի օրինակներ են ներառում ֆոնդային բորսաները, սոցիալական ցանցերը, օդային տրանսպորտը, արբանյակները:

² <https://www2.deloitte.com/tw/en/pages/financial-services/articles/open-banking-around-the-world.html>

մի անձանց միջև, որոնց հետ ցանկություն կունենան համագործակցելու: Այս մոտեցման կիրառման վառ օրինակներ են Հոնկոնգի և Ավստրալիայի համակարգերը¹:

Հոնկոնգում բաց API-ների մոտեցումը կիրառելու համար 2018 թ. 4 փուլից բաղկացած ընթացակարգ է գործադրվել բանկերում API-ներ ներդնելու համար, որն սկսվում է ապրանքների ու ծառայությունների վերաբերյալ տեղեկության տարածումից և ավարտվում գործարքային տեղեկատվությամբ և վճարումների կառավարման ծառայություններով: Ճապոնիայում սահմանափակում է դրվում այն անձանց վրա, որոնք ծառայություններ են տրամադրում, իսկ Եվրոպայում այդպիսի սահմանափակում չկա՝ օգտատերերը հնարավորություն ունեն իրենց տվյալները տարածել ցանկացած երրորդ կողմի հետ՝ սպառողների տվյալների իրավունքի ակտի շրջանակում (Consumer data right act), որով էլ սպառողներին հնարավորություն է տրվում կառավարելու ռիսկերը²:

Ավստրալիան կարգավորվող մոտեցում է կիրառում, սակայն աչքի է ընկնում իր ազատական գաղափարներով, քանի որ սահմանափակում չի դնում ծառայություն մատուցողների վրա, այլ CDR-ի (Consumer data right) միջոցով սահմանում է տվյալների օգտագործման պայմանները:

Համեմատելով տարբեր երկրները փորձը՝ կարող ենք ասել, որ Հնդկաստանը մեկ քայլ առաջ է անցել՝ ստեղծելով կենտրոնական համակարգ՝ UPI (Unified Payment Interface), որը մուտք է ապահովում ավելի քան 100 բանկերի՝ մեկ միասնական ինտեգրման միջոցով: Այն հնարավորություն է տալիս Google Pay-ի և BHAM-ի (Հնդկաստանի երրորդ կողմի ծառայություն) միջոցով իրականացնելու վճարումներ ավելի քան 100 բանկերից: Գործարկման երկրորդ տարվանից արդեն այն Հնդկաստանում ներգրավել է ավելի քան 60 միլիոն ամսական ակտիվ թվային վճարումներ իրականացնողների: Հնդկաստանը գործարկել է մեկ այլ կարևոր նորամուծություն ևս. նրա հաշիվներ ագրեգացնող համակարգը հաճախորդին հնարավորություն է տալիս ունենալու մեծ քանակով տվյալների հասանելիություն՝ միայն 1 անգամ հաստատում ստանալով վերջինիս կողմից³: Հնդկաստանի կատարած երկրորդ գլխավոր քայլն այն էր, որ բաց բանկինգը հասանելի դարձրեց նաև միջինից ցածր եկամուտ ունեցողների համար:

Մեծ Բրիտանիայում բաց բանկային համակարգի կիրառումը սկսվել է PSD2-ի գործարկումից: Իրական բանկային համակարգում մրցակցության նպատակով Մեծ Բրիտանիայի իշխանությունները բանկերից պահանջեցին բացել իրենց տվյալները և տարածել դրանք: Մեծ Բրիտանիայի ֆինանսական կազմակերպությունների հետազոտությունը ցույց է տվել, որ նման քայլը կխթանի ավելի մրցակցային ու նորարար բիզնես մոդելների գործունեությունը՝ հաճախորդներին առաջարկելով այնպիսի նոր ծառայություններ, ինչպիսիք են էժան վճարային լուծումները, բյուջետավորման և փողի կառավարման տվյալափոխանակ գործիքակազմը: Դրանք հնարավորություն կտան նաև ընտրություն կատարելու ծառայություն մատուցողների միջև: Մեծ Բրիտանիայում բաց բանկային համակարգն սկսել է կիրառվել 2018 թվականին՝ արդեն տարեվերջին ունենալով 100 երրորդ կողմի ծառայություն մատուցողներ, որոնց թիվը

¹ Տե՛ս նույն տեղում:

² Սպառողների տվյալների իրավունքը (CDR) ներդրվել է սպառողներին իրենց տվյալների նկատմամբ ավելի մեծ վերահսկողություն տալու համար:

³ <https://thepayers.com/expert-opinion/the-evolution-of-open-banking-in-india-2--1253344>

կրկնապատկվել է 2020-ին: Կրկնապատկվել է նաև բանկերի թիվը, որոնք տարածել են իրենց տվյալները¹:

Եզրակացություն: Ամփոփելով կարող ենք ասել՝ բաց բանկային համակարգը հեղափոխություն է, որն իր հետ բերում է մի շարք առավելություններ և ռիսկեր: Առավելություններին անդրադառնանք առանձին-առանձին.

- վճարումների պարզեցում. վճարումները կդառնան ավելի էժան և արագ:
- Համախմբում կամ ամբողջ տեղեկատվության ներկայացում 1 էկրանին: Բանկերի հաճախորդների ու քարտատերերի համար սեփական հաշվեկշիռը ստուգելիս հաճախ հանդիպող ու գլխացավանք պատճառող խնդիր է միանգամից մի քանի ծրագրային փաթեթներից օգտվելը: Բաց բանկային համակարգը թույլ կտա միանգամից տեսնել և հեշտությամբ կառավարել տարբեր բանկերի քարտային հաշիվները, ավանդներն ու վարկերը:

Բանկերը ու ֆինանսական կազմակերպությունները տիրապետում են ահեղի քանակով տվյալների՝ սկսած կոմունալ վճարներից մինչև սուպերմարկետում կատարած գնումները, որոնց հետագա տարածումը հնարավորություն կտա մշակելու ավելի էժան ծառայություններ, ինչպես նաև կծառայի ֆինանսական խորհրդատվությանը:

- Վարկ վերցնելն ավելի դյուրին կդառնա փոքր և միջին բիզնեսի, ինչպես նաև սպառողների համար:

Ներկայումս ֆինտեխ ընկերություններն այս հարցին անդրադարձել են և առաջարկում են լուծումներ՝ տեղեկություն ստանալով ընկերության բանկային հաշիվներից և ուղղելով այն դեպի առցանց հարթակներ, որտեղ պարբերաբար դասակարգվում և համախմբվում են եկամուտներն ու ծախսերը՝ դրանց հիման վրա իրականացնելով կանխատեսումներ և խորհրդատվություն երկարաժամկետ ֆինանսական պլանավորման հարցերով: Դա, իր հերթին, օգնում է վարկատուներին ավելի արագ ու հաստատական որոշումներ ընդունել անհատին կամ կազմակերպությանը վարկ տրամադրելու վերաբերյալ:

Այս ամենի արդյունքն անխուսափելիորեն լինելու է ֆինանսական ծառայությունների արդյունաբերության հեղափոխությունը: Այն ամբողջությամբ կփոխի հաճախորդների հարաբերությունները բանկերի ու ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունների հետ, կառաջարկի նոր ուղիներ և կխթանի նորարարությունն և մրցակցությունը:

Ամփոփելով միջազգային փորձը՝ կարող ենք ասել, որ բաց բանկինգը հեռանկարային քայլ կլինի Հայաստանի համար՝ հաշվի առնելով, որ այն լայն ճանաչում է գտել և ակտիվորեն օգտագործվում է հասարակության կողմից: Քանի որ բաց բանկինգն ունի մեծ ռիսկեր, ապա ՀՀ-ում կենտրոնական բանկի, ինչպես նաև պետության ռացիոնալ միջամտությունն ու համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումը հնարավորություն կտան արդյունավետորեն կարգավորելու բաց բանկային համակարգը և ստեղծելու շարժիչ գործոն՝ ՀՀ ֆինանսական շուկան զարգացնելու համար:

¹ <https://www2.deloitte.com/tw/en/pages/financial-services/articles/open-banking-around-the-world.html>

Օգտագործված գրականության ցանկ

1. Open Data and the Future of Banking, by Greg Chen, Xavier Faz, CGAP Leadership Essay Series, 23 october 2019.
2. Open Banking around the world “Towards a cross-industry data sharing ecosystem”, Article by EMEA Center for Regulatory Strategy, publisher: Deloitte
3. <https://monei.com/blog/fintech-vs-traditional-banks/>
4. Open Banking: European Countries Need to “Harmonize” their Approach to Open Finance, Andréa Toucinho.
5. A Hybrid MCDM Model for Evaluating Open Banking Business Partners, Kao-Yi Shen, Alexander Kuan-Daiy.
6. <https://www.investopedia.com/terms/o/open-banking.asp>
7. <https://www.finextra.com/blogposting/18875/open-banking-as-a-world-of-open-opportunities-and-hidden-risks>
8. <https://thepaypers.com/expert-opinion/the-evolution-of-open-banking-in-india-2-1253344>

САТЕНИК ГЕВОРГЯН*Экономика, бакалавриат, 3-й курс***OPEN BANKING - ПЕРСПЕКТИВА РАЗВИТИЯ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ**

Ключевые слова: *open banking, мобильный банкинг, банковские услуги, финтех-компании, информационная безопасность*

В настоящее время услуги, предлагаемые банковской системой, достаточно традиционны, зачастую в век технологии они не соответствуют времени и не удовлетворяют потребности клиентов. Поскольку здоровая конкуренция на рынке способствует инновациям, повышает эффективность рынка, правительства ряда стран стремились увеличить потенциал финансового рынка и адаптировать его к требованиям 21-го века, подталкивая финтех-компании к выходу в банковскую сферу. Финтех-компании предлагают клиентам такие услуги, которые открывают перед ними новые, более широкие возможности. Одним из инновационных примеров является технологически открытая банковская система. Изучив опыт применения открытой банковской системы в ряде стран, исследуя ее возможные риски и преимущества, мы пришли к выводу, что это будет стимулировать конкуренцию на финансовом рынке, облегчит управление карточными счетами, депозитами, кредитами, платежами различных банков и будет способствовать трансформации отношений между банком и клиентом.

SATENIK GEVORGYAN*Economy, Bachelor's Degree, 3rd Year***OPEN BANKING- PERSPECTIVES ON THE DEVELOPMENT OF THE BANKING SYSTEM**

Keywords: *open banking, mobile banking, banking services, fintech companies, information security.*

In this day and age, services offered by the banking system are traditional. In the century of technology, they do not correspond to the time and do not satisfy the needs of customers. Since healthy competition promotes innovation and improves market efficiency, governments of many countries sought to increase the potential of the financial market in order to bring it in line with the requirements of the 21st century. Along with this, pushing

fintech companies to enter the banking sector. Fintech companies offer services that open up broader opportunities for their customers. The innovative example of this is the technologically open banking system. Studying the experience of numerous countries who switched to an open banking system with its risks and benefits, we have concluded that it will boost competition in the financial market. Moreover, it will facilitate the management of credit cards, deposits, loans, payments from various banks and will contribute to the reformation of relations between the bank and the client.

ՀԱՅՐԱՊԵՏ ԳՈՐՅԱՆ

Մարքեթինգային հաղորդակցություններ,
մագիստրատուրա, 2-րդ կուրս

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. վճարային քարտ, անկանխիկ, վճարում,
բանկ, գործարք

Սույն հոդվածում ուսումնասիրվել ու վերլուծվել են անկանխիկ վճարումները, մասնավորապես՝ վճարային քարտերով կատարվող գործառնությունները, վերջիններիս կառուցվածքային, քանակական և ծավալային ցուցանիշները, անդրադարձ է կատարվել նախահամաձարակային և հետհամաձարակային ժամանակահատվածին՝ նպատակ ունենալով ցույց տալու համաձարակի ազդեցությունը ՀՀ-ում կատարվող անկանխիկ գործառնությունների առկա միտումների վրա: Մշակվել է նաև մի քանի առաջարկություն՝ միավաճ անկանխիկ գործառնությունների խթանմանը:

Ներածություն: Բանկային ծառայությունների ամենապահանջված և ամենադինամիկ զարգացող տեսակներից մեկը վճարային քարտերի թողարկումն ու սպասարկումն է: Վճարային պլաստիկ քարտը անկանխիկ վճարամիջոց է և հաճախորդներին ընծեռում է ֆինանսական սպասարկման նոր ու ճկուն հնարավորություններ. նվազեցնում է կանխիկով կատարվող գործառնությունների ծախսերը, իջեցնում կանխիկի պահպանման և տեղափոխման ծախսերը, վերացնում կանխիկ փողի կորստի ռիսկը, գողությունների ավանդական ճկերը, արտոնյալ պայմաններ ստեղծում գործարար շուկայի մասնակիցների համար, ինչպես նաև զգալիորեն արագացնում ու հեշտացնում է անկանխիկ վճարումները և այլն: Վճարային քարտը, իրավամբ, հաճախորդի՝ բանկ մուտք գործելու առաջին կարևորագույն «այցեքարտերից» մեկն է, որը սկիզբ է դնում բանկ-հաճախորդ փոխհարաբերություններին:

Գրականության ակնարկ: Համաձայն ոլորտը կարգավորող օրենքի՝ «վճարային քարտը դեբետային, վարկային, էլեկտրոնային քսակի կամ միջազգային պրակտիկայում ընդունված այլ տեսակի քարտի ձևով վճարային գործիք է, որն օգտագործվում է կանխիկ դրամ ստանալու կամ անկանխիկ եղանակով վճարումներ կատարելու, ինչպես նաև վճարային քարտ թողարկողի սահմանած այլ գործառնություններ կատարելու համար»¹: Այսինքն, այն գործիք է, որով կարելի է ստանալ դրամական միջոցներ, բանկի բաժանմունքներից և բանկումատներից կանխիկացնել գումար, առանց կանխիկի կատարել վճարումներ առևտրի ու սպասարկման կետերում, իրականացնել առցանց

¹ Տե՛ս «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2004.12.28/72(371), հոդ.1471: